Արձանագրություն N 3

<<ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/7>> ծածկագրով Ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 23.04.2019թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Ղուկասյան
Հանձնաժողովի անդամներ ՝ Հ. Բաղինյան
Լ. Խալաթովա
Շ. Իսախանյան
Ս. Զաքոյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման պատասխանի մասին

(Տ. Ղուկասյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Տ. Ղուկասյան)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<Տիգրան Բրուտյան>> ԱՁ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Տ. Ղուկասյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ. Ղուկասյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Տ. Ղուկասյան

Անդամ՝ ---------- Հ. Բաղինյան

---------- Լ. Խալաթովա

---------- Շ. Իսախանյան

---------- Ս. Զաքոյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան